ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/288

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.10.2021թ. թիվ 26/26-1/16269-2021 գրությամբ Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 29.09.2021թ. թիվ 01/61-23269 գրության հիման վրա, 06.10.2021թ. թիվ 26/26-1/16269-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/288 ընթացակարգի շրջանակներում 29.10.2021թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.09.2021թ. թիվ 01/61-23269 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 27.08.2021թ. հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-21/6» ծածկագրով մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանը:

22.09.2021թ. Երևանի քաղաքապետարանի գնումների վարչություն մուտքագրված գրությամբ, Մասնակիցը հրաժարվել է ԵՔ-ԷԱՃԾՁԲ-21/6 ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնից:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետը, որոշեց գնման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/288 ընթացակարգի շրջանակներում 29.10.2021թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/288 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/288 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-21/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.09.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանին 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հաղթող (ընտրված) մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

3. Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանը, Երևանի քաղաքապետարանին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԵՔ-ԷԱՃԾՁԲ-21/6 ծածկագրով մրցույթի ժամանակ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, որի հետևանքով 2-րդ չափաբաժնի գինը 4004000 չորս միլիոն չորս հազարի փոխարեն գրվել է 404000 չորս հարյուր չորս հազար, որի հետևանքով հրաժարվում եմ այդ չափաբաժնի մասով պայմանագրի կնքումից»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.09.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանի կողմից ստացվել է գրություն, որով վերջինս հրաժարվել է 2-րդ չափաբաժնից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.10.2021թ. թիվ 26/26-1/16269-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 29.09.2021թ. թիվ 01/61-23269 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-21/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.09.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանին 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հաղթող (ընտրված) մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանը, Երևանի քաղաքապետարանին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԵՔ-ԷԱՃԾՁԲ-21/6 ծածկագրով մրցույթի ժամանակ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, որի հետևանքով 2-րդ չափաբաժնի գինը 4004000 չորս միլիոն չորս հազարի փոխարեն գրվել է 404000 չորս հարյուր չորս հազար, որի հետևանքով հրաժարվում եմ այդ չափաբաժնի մասով պայմանագրի կնքումից»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.09.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ***<u>Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանի կողմից ստացվել է գրություն, որով վերջինս հրաժարվել է 2-րդ չափաբաժնից:</u>***

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո Պատվիրատուին ուղղված գրությամբ, հրաժարվել է 2-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.10.2021թ. թիվ 26/26-1/16269-2021 գրությամբ Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Ազնիվ Մկրտչի Մուրադյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**